«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ» ԹԵՄԱՏԻԿ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 9-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ «Հանրակրթության արդի իրավիճակը Հայաստանում և Եկեղեցու դերը կրթական համակարգում» թեմատիկ քննարկում՝ կազմակերպված Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի նախաձեռնությամբ:

Հավաքը բացեց Արցախի թեմի առաջնորդ և հիմնադրամի նախագահ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը՝ անդրադառնալով կրթության կարևորությանը և կրթական ոլորտում առկա ներկայիս խնդիրներին: Այնուհետև հավաքվածներին իր օրհնության խոսքն ուղղեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն անդրադարձավ կրթական բարեփոխումների ասպարեզում Հայ Եկեղեցու ունեցած դերակատարությանը՝ շեշտելով ազգային կրթության անհրաժեշտությունը մատաղ սերնդի դաստիարակության գործում:

«Մեր Եկեղեցու պատմությունը սերտորեն ներշաղախված է մեր ազգի պատմության հետ, և հնարավոր չէ մեր ազգի պատմությունն ուսուցանել՝ առանց անդրադարձ ունենալու, առանց ուսումնասիրելու Հայոց Եկեղեցու պատմությունը, որովհետև 1700-ամյա քրիստոնեական մեր պատմության ընթացքին հաճախ եղել են դարաշրջաններ ընդգրկող ժամանակներ, երբ ազգս հայոց զրկված է եղել պետականությունից, և Եկեղեցին է ստանձնել մեր ժողովրդի նաև քաղաքական կյանքի առաջնորդությունը: ...Կարծում ենք, որ մեր առաքելական Սուրբ Եկեղեցին ավելիով կարող է օգտակար լինել մեր մատաղ սերնդի դաստիարակության աշխատանքներում: Վստահ ենք, որ բարեփոխումներին նվիրված այս ժողովը հնարավորություն կընձեռի նաև մեր Եկեղեցուն տեսնելու այն ասպարեզներն ու բնագավառները, ուր մենք կարող ենք ավելի օգտակար ծառայություն մատուցել»,- նշեց Հայոց Հայրապետն իր խոսքում՝ իր գնահատանքը հայտնելով քննարկման կազմակերպիչներին:

Քննարկումը կարևորեց նաև ՀՀ Կրթության և գիտության նախարար Սերգո Երիցյանը: Նա բարձր գնահատեց Մայր Աթոռի և հատկապես Ամենայն Հայոց Կաթողիկոսի ջանքերն ու գործուն աջակցությունը կրթական բարեփոխումների, ուսուցիչների խրախուսման և այլ խնդիրներում՝ հույս հայտնելով, որ ապագայում էլ ավելի պիտի ավելանան համատեղ ծրագրերը ՀՀ Կրթության և գիտության նախարարության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջև:

Առաջին նիստի ընթացքում լսվեցին հինգ բանախոսություններ: Պրոֆ. Լյուդմիլա Հարությունյանը ներկայացրեց «Հայ հասարակության վերաբերմունքը կրթական համակարգի բարեփոխումներին» սոցիալական հետազոտության արդյունքները: Կրթական համակարգի բարեփոխումների վերաբերյալ զեկուցումներով հանդես եկան ՀՀ Կրթության և գիտության նախարարության Կրթության Ազգային Ինստիտուտի տնօրեն պրն Վիկտոր Մարտիրոսյանը և ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի փոխնախագահ ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանը: Կրթական համակարգի հեռանկարային զարգացման արևմտյան

փորձի մասին բանախոսեց Գերմանիայի Առնոլդ Բեռգշտրասեր ինստիտուտից պրոֆ. Հերիբերթ Վայլանդը: Այնույնց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը հանդես եկավ «Եկեղեցու դերը կրթական համակարգում» թեմայով զեկուցմամբ:

Երկրորդ նիստին տեղի ունեցան քննարկումներ, որոնք ընթացան հիմնականում ուսուցիչների վերապատրաստման, դասագրքերի պատրաստության, դպրոցի և մատուցվող արժեքային համակարգի, ինչպես նաև հատուկ կարիքներով երեխաների կրթության և միջին մասնագիտական կրթության շուրջ:

Քննարկման ընթացքում ստեղծվեց կրթության նախարարության, Եկեղեցու և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խումբ, որն ի մի կբերի քննարկման արդյունքները և կուրվագծի հետագա աշխատանքները կրթական բարեփոխումների, հատուկ կարիքներով երեխաների կրթության և միջին մասնագիտական կրթության համակարգի վերականգնման ոլորտներում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ